ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ, *Համազասպ Սրվանձտյանց, Ե., «Լուսակն» հրատ., 2016, 1087 էջ:*



Աշխատությունը նվիրված է ռազմական, հասարակական, քաղաքական և պետական ականավոր գործիչ, ՀՅԴ առաջին սերնդի ներկայացուցիչ Համազասպ Խաչատուրի Սրվանձտյանցի կյանքի և գործունեության ամբողջական և համակարգված լուսաբանմանը:

Տարիներ շարունակ Հայոց Ազատամարտի մոտ 40-ամյա պատմության ուսումնասիրությունը Մայր հայրենիքում եղել է փականքների տակ, ենթարկվել գրաքննության և անարժան գնահատականի: Ազատամարտի մեծերը ներկայացվել են որպես ազգայնականներ, հակախորհրդային գործիչներ, իմպերիալիզմի գործակալներ, «կեղծ» հայրենասերներ, որով էլ ավելի է մեծացել հարցի նկատմամբ եղած հետաքրքրությունն ուսումնասիրողների շրջանում: Մերժողական այդ վերաբերմունքից զերծ չի մնացել նաև Համազասպը: Նա Հայոց Ազատամարտի անդաստանում աչքի է ընկել հայ զորականի անբասիր վարքով, մտքի ճկունությամբ ու հեռատեսությամբ:

Պատմագետների առջև այսօր դրված է Հայոց Ազատամարտի նվիրյալների կյանքի, գործունեության և միջավայրի բացահայտումը, որը միշտ էլ արդիական է և համահունչ ինքնուրույն պետականություն ունեցող ժողովրդի պատմությանը: Իսկ Համազասպի մասին ամբողջական աշխատությունը ոչ միայն լրացնում է հայրենական պատմագրության մեջ տասնամյակներ շարունակ թողնված բացը և ժողովրդին վերադարձնում Ազատամարտի սիրված հերոսներին մեկին, այլև հարստացնում է նաև Սանդյանց-Սրվանձտյացների բազմաշնորհ տոհմի պատմությունը:

Հարկ է նշել, որ հետազոտողի համար որևիցե անհատի (կամ տվյալ պարագայում հայ ռազմաքաղաքական և պետական նշանավոր գործչին) անդրադառնալն ունի իր դյուրին և բարդ կողմերը: Դյուրին այն առումով, որ հրապարակի վրա առկա են վիթխարի գրականություն, պար-բերական մամուլի և արխիվային փաստագրերի անհատակ նյութեր, հաճախ իրարամերժ, հակասական և դարձյալ որոնումների տեղիք տվող, որոնց ուսումնասիրումը բոլոր դեպքերում լայն հնարավորություններ է ընձեռում իրապես վերարտադրելու ուսումնասիրման խնդիր դարձած ժամանակահատվածը: Եվ բարդ այն առումով, որ կենսագրական բնույթի աշխատությունները պետք է գրված լինեն այդ դարաշրջանի դեպքերի ու իրադարձությունների առձայնությամբ և, որ ամենակարևորն է, գրված լինեն վերկուսակցական դիրքերից, չունենան միտումնավորություն և տվյալ քաղաքական գործչին հանիրավի մեծարելու ձգտում: Հակառակ պարագայում կատարված աշխատանքը կվերածվի «վարք սրբոցի»: Անհատին հարկավոր է գնահատել տեղին և ժամանակին, առանց ավելորդ պճնազարդության: Դրանից կշահի միայն պատմագրությունը և ստվեր չի նետվի Ազատամարտի մյուս հերոսների կատարած ազգօգուտ

գործե- րի վրա: Հետևաբար, ողջունելի է անաչառ ամեն մի փորձ, որն օգնում է ամբողջացնելու հայոց Ազատամարտի հերոսների դերն ու նշանակությունը մեր պատմության մեջ:

Պրոֆ. Գ. Ստեփանյանին հաջողվել է շրջանցել այդ դժվարությունները և հասարակայնության սեփականությունը դարձնել լրջմիտ և հիմնարար մի աշխատանք:

Աշխատության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են 1873-1921 թթ. պատմական այն իրադարձությունները, որոնք անմիջականորեն առնչվում են Համազասպի կյանքին և գործունեությանը:

Հեղինակը աշխատությունը ստորաբաժանել է 7 գլուխների, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է 48-ամյա Համազասպի կյանքի և գործունեության այս կամ այն ժամանակաշրջանին՝ սկսած մանկությունից և պատանեկությունից մինչև հայ-թաթարական ընդհարումների տարիները, (1905-1906 թթ.), բանտարկության, աքսորի և դեգերումների շրջանը (1907-1914 թթ.), ապա՝ Առաջին աշխարհամարտի (1914-1916 թթ.), Բաքվի նահանգում և Դաղստանի մարզում ծավալած կռիվների (1918 թ.) և մինչև կյանքի վերջին շրջանի իրադարձությունները (1921 թ.):

*Ընթերցողի աչքին Համազասպը, որպես գաղափարի և գործի մարդ, վեր է հառնում հասարակական և քաղաքական լարված ու բախումնալի՝ իրադարձությունների մեջ: **«Գործունեությունը հայ-թաթարական ընդհարումների շրջանում»** խորագրով գլխում Գ. Ստեփանյանը վերհանում է Համազասպի հեղափոխական գործունեության վաղ շրջանը՝ նախ որպես Խաչենի 1905 թ. օգոստոս-նոյեմբերի ինքնապաշտպանության ղեկավարի և ապա՝ դեպքերի ազդող ներկայությունը Գանձակում (1905թ. նոյեմբեր- 1906 թ. հունվար), Արցախում (1906 թ. հունվար-հուլիս) և Թուրքեստանում (1906 թ. վերջ – 1907 թ. գարուն):*

*Աշխատության **III գլուխն** ամբողջությամբ նվիրված է Համազասպի բանտարկությանը (Թիֆլիսի Մետեխի, Գանձակի, Դոնի Ռոստովի, Նովոչերկասկի բանտերում), դատավարությանը (որն անցկացվում է Սանկտ-Պետերբուրգում), Սիբիր նրա աքսորին (1907 թ. օգոստոսից մինչև 1912 թ վերջը.) և նրա դեգերումներին՝ Եվրոպայում, Եգիպտոսում և Կ. Պոլսում (1912 թ. վերջ– 1914 թ. օգոստոս):*

*Առանձնահատուկ կարևորություն ունի մենագրության IV գլուխը (որն ընդգրկում է Առաջին աշխարհամարտի շրջանը՝ «**Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ճակատում**»): Հեղինակը նախ բացահայտում է Համազասպի՝ որպես կամավորական III ջոկատի հրամանատարի գոր-ծունեությունը (1914 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր), նրա տպավորիչ ջանքերը Արարատյան գնդի կազմում (1915 թ. ապրիլ-մայիս), ապա մասնակցությունը Վանի շրջանի վերագրավման, Խիզանի, Բաղեշի համար մղված մարտերին և Ալաշկերտի շրջանում՝ որպես պաշտպանության ղեկավարի (1915 թ. օգոստոս – 1917 թ. հոկտեմբեր):*

***«Բաքվի հերոսամարտի հորձանուտում»** վերնագրված գլխում հանգամանորեն լուսաբանվում է Համազասպի դերակատարումը Բաքվում, Ղուբայում և Բաքվի հերոսամարտում: Կարելի է առանձնացնել հեղինակի ջանքերի արդյունավետությունը՝ Համազասպի գործունեության համազգային բնույթը հաստատելու և ցուցադրելու տեսակետից:*

*Գ. Ստեփանյանն առանձնահատուկ ջանք ու եռանդ է ծախսել աշխատության **«Գործունեությունը Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին»** և **«Հայհեղկոմի հանցավոր***

քաղաքականության զոհը» *գլուխներն ի մի բերելու և ամբողջացնելու համար: Դրանք ընդգրկում են զորահրամանատարի կյանքի մայրամուտին շրջանը՝ նախընթաց գործունեությամբ՝ Թիֆլիսում, Երևանում, Նոր Բայազետի գավառում, ինչպես նաև նրա ձերբակալությունը և կյանքի վերջին՝68 օրերը Երևանի կենտրոնական բանտում:*

Անկախ աշխատության պատկառելի ծավալից շարունակ զգացվում է, որ հեղինակը ասելիք ունի, ընդսմին, հիմնավոր և անհրաժեշտ: Եվ այս իմաստով կարևոր են գրքի լուսանկարները և հավելվածները, որոնց մեջ տեղ են գտել Սրվանձտյանց տոհմագրությունը, Համազասպի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը, նրան նվիրված աշուղ Ջիվանու երգը, Համազասպի դատական գործի արձանագրությունները, իր նամակները, հեռագրերը և այլն:

Աշխատության աղբյուրագիտական հենքն ընդգրկում է փաստառատ նյութի լայն մի շրջանակ, որն ամբողջացնում է ազատագրության համար պայքարի ընդհանուր համապատկերը: Միայն օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը կազմում է 50 էջ: Բարեխղճորեն հաշվի առնելով պատմագիտական մտքի ձեռքբերումներն այդ ուղղությամբ, Գ. Ստեփանյանը հայտնաբերել, ուսումնասիրել, գիտական շրջանառության մեջ է դրել և համակարգել վավերագրեր ՀԱԱ-ից, Մատենադարանից, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, ՀՅԴ կենտրոնական (Բոստոն), թՀՀԴ-ի, ՀԹԼԸ-ի արխիվներից, Հայաստանի պատմության պետական թանգարանից, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից, ՀՅԴ պատմության թանագարանից, հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հրատարակված տպագիր սկզբնաղբյուրներ, հուշեր, ուսումնասիրություններ, պարբերական մամուլի նյութեր և համացանցային կայքէջեր՝ ընդհանուր առմամբ մոտ 900 միավոր, որը աշխատանքին տալիս է գիտական կշիռ: Նա նորովի դիտարկմամբ հիմնարար կերպով շոշափել է Համազասպ զինվորական-պետական գործչի հսկայածավալ և նպատակադիր ազգային գործունեությունը, որը հայրենական պատմագրության մեջ առաջին փորձն է:

Աշխատության մեջ դեպքերն ու երևույթները ներկայացված են պատճառական կապերով և փոխազդեցություններով, որոնց մեջ հետզհետե ուրվագծվում և առաջնային է դառնում անհատը՝ Համազասպը՝ իր խորապես մարդկային նկարագրով միշտ նվիրված իր ժողովրդին և նրա հետ: Ունենալով գիտաքաղաքական, իմացական և գործնական նշանակություն՝ աշխատությունը գրված է պատմաքննական բարձր մակարդակով: Ուշադրության են արժանի հեղինակի հիմնավորված և տրամաբանված եզրահանգումներն ու փաստարկված, ճիշտ գնահատական-ները, որոնք հույժ այժմեական են և հակադարձում են գիտական շատ մոտեցումների:

Աշխատությունն աչքի է ընկնում հղկված գիտական ոճով, բայց կարելի էր խուսափել լեզվական և ոճական որոշ շեղումներից, որոնք, թվում է՝ անխուսափելի են նման ծավալի և ընդգրկումների պարագայում:

Բարձր գնահատելով և ըստ ամենայնի արժևորելով Գ. Ստեփանյանի կատարած արդյունավետ, բայց և դժվարին աշխատանքը՝ հարկ ենք համարում նշել, որ այս մենագրությունը ծանրակշիռ և լուրջ ներդրում է հայագիտության բնագավառում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու